

ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԵՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Ը. Տարի, Թիւ 352, Ուրբաթ, 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2016

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՀՀ Անկախութեան 25 ամեակը Քուէթի Ազգային Վարժարանէն ներս

Չորեքշաբթի, 21 Սեպտեմբեր 2016ին, Քուէթի Ազգային Վարժարանի ուսուցչաց կազմը, Հայաստանի վերանկախացման 25 ամեակին առթիւ կազմակերպեց գեղեցիկ հաւաք մը վարժարանի սրահէն ներս, ներկայութեամբ՝ Ազգային Վարժարանի նորանշանակ տնօրէն՝ Բժ. Ներսէս Սարգիսեանի, պետական տեսուչ՝ Տիկ. Սամիրա Ալ Ռաճիիի, տեսչական, վարչական աշխատողներու եւ հոգաբարձական կազմի ներկայացուցիչ՝ Պրն Հմայեակ Քասունիի:

Բարի գալուստի խօսք արտասանեց վարժարանի ընդհանուր հսկիչ Պրն. Վահէ. Պաղճեան,



այնուհետեւ խօսք առաւ տնօրէն՝ Բժ. Ներսէս Սարգիսեան: Ան շնորհաւորեց բոլորը Հայաստանի անկախութեան մեծ տօնին առթիւ:

Յանուն ուսուցչաց կազմին խօսք առաւ արաբերէնի վաստակաշատ ուսուցիչ՝ Պրն. Ճորճ Մալամ: Ան բարի գալուստ մաղթեց նորանշանակ տնօրէնին եւ պետական տեսուչին, ապա շնորհաւորեց հայ ժողովուրդը ՀՀ Անկախութեան տօնին առթիւ, վեր առնելով հայութեան մեծ դերը ընկերութեան մէջ:

Հաւաքին ներկայ էր նաեւ վարժարանի նախկին քարտուղարուհի Տիկ. Սիւզի Խտրլարեան-Մուրատեան, ով հնգամեայ իր ժրաջան աշխատանքին համար գնահատուեցաւ տնօրէնութեան կողմէ:

Հաւաքի ընթացքին Ազգային Վարժարանի վարչական պատասխանատուները հատեցին նաեւ Անկախութեան 25-րդ տարեդարձի կարկանդակը:

Այնուհետեւ բոլորը համախմբուեցան ուսուցիչներու կողմէ պատրաստուած նախաճաշի սեղանին շուրջ, իսկ աւարտին վարժարանի բակին մէջ դպրոցի անձնակազմը ունեցաւ յիշատակի լուսանկար մը:



«Այո»-ն Անկեղծ Էր

Զգիտեմ՝ ով ինչպէս, բայց ես սիրում եմ Մեպտեմբերի 21-ի տօնը: Նոյնիսկ աւելի շատ, քան՝ Նոր տարին: Որովհետեւ տարիները փոխում են մի տեսակ մեքանիկօրէն, մեր կամքից անկախ, իսկ Մեպտեմբերի 21-ը՝ պայմանաւորուած մեր այդ ժամանակուայ կամքով: Շարունակում եմ դա պնդել՝ ի հեճուկս այն բաւականին տարածուած յայտարարութիւնների, թէ իբր Խորհրդային Միութեան քանդուելուց, միեւնոյն է, անկախութիւն կը ստանայինք: Գուցէի ստանայինք, բայց տուեալ դէպքում կարելոք է, թէ ինչպէ՛ս:

1990 թուականին Գերագոյն խորհուրդը (ի տարբերութիւն, ի դէպ, բոլոր յաջորդ խորհրդարանների) արտայայտում էր Հայաստանի հասարակութեան կամքը, եւ այն կայացրեց, իմ կարծիքով, միակ ճիշդ որոշումը՝ առաջնորդուել այն ժամանակ դեռեւս գործող խորհրդային օրէնքներով՝ մասնաւորապէս 6 ամիս շուտ յայտարարել հանրաքուէի որոշման մասին՝ չմասնակցելով 1991 թուականի մարտի 17-ի՝ Գորբաչովի նախաձեռնած «Խորհրդային Միութեան պահպանման մասին» հանրաքուէին: Ուշադրութիւն դարձրէք, որ Ռուսաստանը, Ուքրանիան, Պիելժուուսիան, Ազրպէյճանը եւ Կենտրոնական Ասիայի հանրապետութիւնները մասնակցեցին յիշեալ հանրաքուէին եւ ճնշող մեծամասնութեամբ «այո» ասացին: Զգիտեմ, թէ որքանով էր անկեղծ իրենց «սովետամետ այո»-ն, բայց մեր «անկախական այո»-ն, անշուշտ, անկեղծ էր: Այն ճանապարհը, որը մենք ընտրել ենք (տուեալ դէպքում կարող եմ, չէ՞, ասել «մենք») ճիշդ էր իր ընթացակարգով եւ բովանդակութեամբ՝ նաեւ այն պատճառով, որ մենք չզգիտենք, թէ ում հիւանդ մտքով կ'անցնի նոյնիսկ հետագայում վերականգնել Խորհրդային Միութիւնը կամ «մտցնել» մեզ Ռուսաստանի կազմի մէջ եւ դրա համար գտնել «իբրաւական հիմնաւորումներ»՝ իբր մենք «սխալ ենք դուրս եկել» ԽՍՀՄ կազմից: Մենք «տէ ժուրէ» անկախ երկիր ենք. մնացածը, հաւատացնում եմ ձեզ, կը կարգաւորուի: Կը կարգաւորուի այնքան շուտ, որքան ամէն մէկս կը զգայ իր պատասխանատուութիւնը: Մեր սխալների մեծ մասը պայմանաւորուած էր մեր անփորձութեամբ: Մեզ թում էր, թէ բաւարար է յայտարարել անկախութեան, ժողովրդավարութեան եւ շուկայական յարաբերութիւնների մասին, եւ դրանք ինքնաբերաբար «կ'իջնեն երկնքից»:

Բայց դրանք (իսկ մեծ հաշուով՝ Պետութիւնը) պատրաստի «մթերք» չեն, որը մնում է միայն ուտել, դրանք անվերջանալի գործընթաց են, որ պահանջում են ամէնօրեայ աշխատանք, տանջանք, երբեմն ինքնազրկում եւ միշտ՝ բարոյական անասան սկզբունքներ: Այդքանը գլխի ընկնելու համար 25 տարին, կարծում եմ, բաւարար է: Ամբողջ խնդիրն այն է, որ այդ գործողութիւններն ու սկզբունքները պէտք չէ ակնկալել «վերեւներից», դրանք պէտք է կիրառել սեփական կեանքում: Շատ բարդ է խոստովանել, որ մենք դա չենք անում:... Վատ անկախութիւնն աւելի լաւ է, քան՝ անկախութեան բացակայութիւնը:

ԱՐԱՄ ԱՐԴԱՅԱՄԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

Հայաստանի Անկախության Վերականգնման 25-Ամեակի Զորահանդեսին Ընթացքին. «Մենք Մեր Ձեռքբերումները Պետք է Բազմապատկենք Մե՛ր Աշխատանքով Եւ Պաշտպանենք Մե՛ր Ուժերով» Ըսաւ Նախագահ Սարգսեան

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման 25-րդ տարեդարձի առիթով Երևանի Հանրապետության հրապարակին վրայ տեղի ունեցաւ զորահանդես՝ հայկական զինուած ուժերու բոլոր ստորաբաժանումներուն մասնակցութեամբ:

Ցուցադրուեցան հայկական բանակի նորագոյն ձեռքբերումները, որոնց մասին վերջին շրջանին լրատուամիջոցները գրած են. հեռահար՝ «Իսքանտեր» հրթիռային համալիրներ, համազարկային կրակի հեռահար՝ «Սմերչ» համակարգեր, հակաօդային պաշտպանութեան համար նախատեսուած «Պուք» զենիթահրթիռային համալիրներ եւ ռատիոէլէկտրոնային պայքարի նորագոյն՝ «Ինֆատունա» համակարգ:



Զորահանդեսին ընթացքին Հայաստանի Հանրապետության նախագահը հանդէս եկաւ խօսքով մը, որուն մէջ ըսաւ. «Այսօր՝ 21-րդ դարուն զենքերը փոխուած են, բայց չենք փոխուած մենք՝ սեփական ազատութիւնը պաշտպանելու մեր վճռականութեամբ:

Վկան այս զորահանդէսն է:

Վստահաբար, իտէալական աշխարհին մէջ իրաւունքն է, որ պէտք է ծնի ուժ: Բայց այսօրուան աշխարհն ու մեր

շրջապատը հեռու են իտէալական ըլլալէ: Դեռ կան հանգամանքներ, երբ ուժը կը ծնի իրաւունք: Մենք ունինք մեր իրաւունքը եւ մեր ազատութիւնը պաշտպանելու ուժը: Վկան այս զորահանդէսն է:

Ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանութեան կարիք ունին ո՛չ միայն արտաքին սպառնալիքներէ: Մեր քաղաքացիները եւս պէտք է ազատ ըլլան, որովհետեւ ազատ մարդն ու ազատ հասարակութիւնը անհամեմատ աւելի արդիւնաւէտ կը գործեն: Մենք կրնանք եւ պէտք է շարունակենք կառուցել արդիւնաւէտ երկիր, որ պիտի պաշտպանէ ազատ քաղաքացին եւ ազատ հասարակութիւնը: Անազատ մարդիկ տեսականօրէն կրնան ստեղծել շատ բան, բայց ոչ երջանկութիւն:

Անցած 25 տարիներուն ընթացքին մենք անշրջելի յաջողութիւններ արձանագրած ենք: Երբեմն սխալած ենք, երբեմն՝ ծայրայեղութիւններու մէջ յայտնուած, բայց, մեծ հաշուով, ճիշդ ուղիով շարժած ենք: Մենք կը կառուցենք մեր երջանկութիւնը խաղաղ եւ ստեղծագործ արարման ճամբով: Իսկ յառաջ շարժելու մեր բանաձեւը շատ պարզ է՝ աշխատանք, աշխատանք եւ

աշխատանք: Մենք մեր ձեռքբերումները պետք է բազմապատկենք մե՛ր աշխատանքով եւ պաշտպանենք մե՛ր ուժերով:

Կեցցե՛ն Հայաստանի սահմանները աշալուրջ հսկող մեր տղաները. անոնք մեր ազատութեան թիւ մէկ երաշխաւորն են: Փա՛ռք արցախեան ազատամարտը կերտած անմահ հերոսներուն եւ մեր բոլոր քաջարի տղաներուն: Փա՛ռք ապրիլեան մեր կորիւններուն, որ յօդս ցնդեցուցին հակառակորդին բոլոր ծրագիրները: Ամիսներ առաջ հետախույզ-գնդացրորդ Սասուն Մկրտչեանի շիրիմին առջեւ մեր բոլորին անունով խոստացայ, որ պիտի շարունակենք Սասունին եւ իր ընկերներուն սուրբ գործը, միշտ վառ պիտի պահենք Արցախի եւ Հայաստանի նոր սերունդէն ճառագայթող այն լոյսը, որ ապրիլեան օրերուն բոլորս դարձուցած էր միասնական. միասնական մէկ բռունցք՝ պատրաստ իջնելու մեր անվտանգութեան սպառնացող ոսոխի գլխուն: Մենք մեր խոստումը պիտի պահենք: Վկան այս զօրահանդէսն է:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին՝ հողի մշակն ու շինարարը, բժիշկն ու ուսուցիչը, հանքափորն ու գործարարը, պետական ծառայողն ու մշակութային գործիչը: Փա՛ռք նոր արժէք ստեղծող հայաստանցիին:

Կեցցե՛ Հայաստան-Արցախ-սփիւռք եռամիասնութիւնը. միասին մենք աւելին ենք, քան կարելի է պատկերացնել:

Կեցցե՛ն Հայաստանի ազգային փոքրամասնութիւնները ներկայացնող մեր քոյրերն ու եղբայրները, որոնք հաւասարապէս լծուած են մեր երկրի զարգացումն ու պաշտպանութիւնը հետեւողականօրէն առջեւ տանելու գործին:

Կեցցե՛ հայ աւանդական ընտանիքը, որ ժամանակի բոլոր հոսանքներէն անդին կը շարունակէ մնալ հերոսներ կերտող եւ ուսումնաստենչ սերունդ մեծցնող ջերմութեան աղբիւր:

Յարգելի՛ հայրենակիցներ,

Կրկին կը շնորհաւորեմ բոլորս եւ ամբողջ հայութիւնը Հայաստանի պետականութեան վերականգնման քառորդդարեայ յոբելեանի առիթով:

Փա՛ռք Հայաստանի Հանրապետութեան:

Փա՛ռք Հայաստանի զինուած ուժերուն»:

Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Վերականգնման 25-Ամեակի Տարեդարձին Առիթով Հայոց Քաղաքական Եւ Հոգեւոր Ղեկավարութիւնը Այցելեց «Եռաբլուր» Պանթէոն

Հայաստանի անկախութեան վերականգնման 25-ամեակին առիթով Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեանի, Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի եւ հանրապետութեան բարձրագոյն ղեկավարութեան ընկերակցութեամբ Չորեքշաբթի, 21 Սեպտեմբերին, այցելած է «Եռաբլուր» զինուորական պանթէոն՝ յարգանքի

տուրք մատուցելու իրենց կեանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիներու յիշատակին:

Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Կը Դատապարտէ Օպամայի Շնորհաւորական Ուղերձը

Միացեալ Նահանգներու Հայ դատի յանձնախումբը կը դատապարտէ Հայաստանի նախագահին ուղղուած Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի շնորհաւորական ուղերձը:

Հայ դատի յանձնախումբը կը նշէ, որ նամակը ուշագրաւ է մասնաւորապէս անով, որ Հայոց ցեղասպանութեան մասին որեւէ յիշատակում չկայ, բան մը, զոր նախագահը այդքան կ'օգտագործէր 2008-ին ամերիկահայերուն քուէները ապահովելու համար, բայց ընտրուելէն ետք հրաժարեցաւ անկէ:

Նամակին մէջ անդրադարձ չկայ նաեւ Հայաստան – Թուրքիա արձանագրութիւններուն, չի յիշատակուիր նաեւ Արցախը:

«Հետաքրքրական է, որ Օպամայի վարչակազմը այլ պարունակի մէջ օգտագործած է «մենք հաւատարիմ կը մնանք նախորդ տարիներու խոստումին» նախադասութիւնը, որ կրնայ դիրքութեամբ վերաբերիլ նաեւ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու իր իսկ չիրականացուած խոստումին», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 25-րդ Տարեդարձին Առիթով Նախագահի Նստավայրին Մէջ Տեղի Ունեցած Է Պարգևատրման Արարողութիւն

Նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագիրներով, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 25-րդ տարեդարձին առիթով հանրապետութեան նախագահը պետականութեան կայացման, պաշտպանունակութեան եւ անվտանգութեան ամրապնդման, իրաւակարգի եւ օրինականութեան պահպանման, տնտեսութեան զարգացման, հայրենիք-սփիւռք կապերու ամրապնդման եւ հայապահպանութեան գործին մէջ ներդրած ասանդի, գիտութեան, կրթութեան, առողջապահութեան, մշակոյթի եւ արուեստի մարզերուն մէջ ձեռք



բերած ակնառու յաջողութիւններու համար խումբ մը անձերու պարգևատրած է Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն պարգեւներով՝ շքանշաններով եւ մետալներով, շնորհուած են նաեւ պատուաւոր եւ զինուորական կոչումներ:



Տարբեր մարզերու մէջ ակնառու յաջողութիւններու հասած յիշեալ անձերուն նախագահ Սերժ Սարգսեան Չորեքշաբթի օր՝ 20 Սեպտեմբերին, նախագահի նստավայրին մէջ տեղի ունեցած պարգևատրման հանդիսաւոր արարողութեան ընթացքին յանձնած է պետական բարձր պարգեւները: Հանրապետութեան նախագահը շնորհաւորած է բոլոր պարգևատրուածները եւ մաղթած յաջողութիւններ:

Արժանթինի Քաթամարքա Նահանգը Ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը

«Նիուզ» կը հաղորդէ, որ Արժանթինի Քաթամարքա նահանգը եւս ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը ու դէմ գալով ժխտումի քաղաքականութեան՝ որոշած ապրիլ 24-ը ճանչնալ իբրեւ Հայոց ցեղասպանութեան զոհերու յարգանքի օր:

Նշենք, որ Արժանթինի կառավարութիւնը 13 դեկտեմբեր 2006-ին իբրեւ օրէնք ընդունած էր Հայոց ցեղասպանութեան բանաձեւը, եւ անկէ ի վեր Արժանթինի 17 նահանգներ ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը:

Արծուիկ Մինասեան Առարկեց Վարչապետին. «Ինծի Համար Ցանկալի Չէ «Էկոնոմիկա» Բառը Հանելը

22 Սեպտեմբերի կառավարութեան նիստին կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեան զեկուցեց կառավարութեան կառուցուածքային փոփոխութիւններուն մասին, որոնց կարգին «Էկոնոմիկայի նախարարութիւն»-ը վերանուանուած է «Ներդրումների եւ ձեռնարկատիրութեանն աջակցման նախարարութիւն»:

Վարչապետ Կարէն Կարապետեանն ալ մանրամասնութիւններ ներկայացուց այն տրամաբանութեան մասին, որով առաջնորդուած են փոփոխութիւններ կատարելու ատեն:

Առարկութիւն ունէր տնտեսութեան նախարար Արծուիկ Մինասեան: «Բնականաբար, իբրեւ տնտեսութեան նախարարի ժամանակաւոր պաշտօնակատար, ինծի համար ցանկալի չէ «Էկոնոմիկա» բառը հանելը, առաւել եւս, որ ես տնտեսութիւնը կը պատկերացնեմ աւելի լայն, քան ներդրումները կամ ձեռնարկատիրութեան աջակցութիւնը: Ահա, թէ ինչու, ընդունելով հանդերձ ձեռք կոդմէ կատարուած շեշտադրումը, որ ներդրումներն ու ձեռնարկատիրութեան աջակցութիւնը պէտք է առանձին ուղղութիւն ըլլայ, զիս կը մտահոգեն քանի մը հարցեր, որոնք այսօր տնտեսութեան նախարարութեան ծիրին մէջ են, բայց անուանման մէջ անոնք չեն երեւիր: Մասնաւորապէս՝ առեւտուրի հատուածը, արտաքին առեւտուրը, որ ներդրումներուն հետ կը նկատուի մեր երկրի տնտեսութեան հիմնական շարժիչ ուժը: Թերեւս ատիկա այլ նախարարութեան մը ծիրին մէջ պիտի ըլլայ կամ մնայ, կը խնդրէի, որ անուանումին մէջ այդ շեշտադրումը ըլլայ», ըսած է ան:

Մինասեան հարցուցած է նաեւ, թէ որակի ենթակառուցուածքները ո՞ր մարմինի լիազօրութեան ներքեւ կը գտնուին: «Տրանսպորտի եւ կապի նախարարութիւն»-ը «Տրանսպորտի, կապի եւ տեղեկատուական տեխնոլոգիաների նախարարութիւն» կոչելու գծով ան ըսաւ, որ, բարձր գնահատելով փոխադրութեան եւ կապի նոր նախարարին բարձր կարողութիւնները եւ անոր վերաբերեալ դրական կարծիքը, ցանկալի է, որ տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտը չդիտարկուի իբրեւ զուտ ծառայութիւններու ոլորտ, որովհետեւ անիկա ներկայիս կ'ընկալուի իբրեւ արդիւնաբերութիւն: Արծուիկ Մինասեան հետաքրքրուած է, թէ ո՞ր մարմինը պիտի ունենայ տնտեսութեան նախարարութեան նուիրատուներու հետ համագործակցութեան լիազօրութիւնը, օդանաւային պատահարներու ուսումնասիրութեան եւ քննութեան լիազօրութիւնը:

www.armenianprelacykw.org

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Քերրի. «Սուրիական Եւ Ռուսական Օդանաւերուն Պէտք Է Արգիլել Թռիչք Կատարել Ընդդիմութեան Տարածքներուն Վերեւ»

Միացեալ Նահանգներ յայտարարեցին, որ Ռուսիան պատասխանատու կը նկատեն Հալէպի մօտ մարդասիրական օժանդակութիւն փոխադրող կարաւանի մը դէմ կատարուած յարձակումին:

Սպիտակ տունը դէպքը կոչեց «մարդկային մեծ ողբերգութիւն» մը: Սպիտակ տան բանբեր Պեն Ռոտզ ըսաւ. «Միայն երկու կողմեր կրնային պատասխանատու ըլլալ, կա՛մ սուրիական վարչակարգը, կա՛մ ալ՝ ռուսական կառավարութիւնը: Յամենայն դէպս, մենք ռուսական կառավարութիւնը պատասխանատու կը նկատենք այդ տարածքին մէջ կատարուած օդային հարուածներուն»:

Ամերիկացի անանուն պաշտօնատարներ իրենց կարգին «Պի.Պի.Սի.»-ին յայտնեցին, որ յարձակումը կատարուած է ռուսական «Սու-24» տիպի երկու ուժաձիգներու կողմէ, որոնք Ուրում Քուպրայի մէջ կարաւանի դէմ կատարուած յարձակումին ճիշդ պահուն շրջանին վերեւ թռիչք կը կատարէին: Չորեքշաբթի օր Հալէպի մէջ ուժակոծուեցաւ դարմանատուն մը: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Ճոն Քերրի Մոսկուան եւ Դամասկոսը ամբաստանեց ուժակոծման համար եւ յայտարարեց. «Սուրիական եւ ռուսական օդանաւերուն պէտք է արգիլել թռիչք կատարել ընդդիմութեան տարածքներուն վերեւ»:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարութիւն մը հրապարակելով բռն կերպով հերքեց ամբաստանութիւնը՝ նշելով. «Փոսեր չեն յառաջացած եւ ինքնաշարժներուն արտաքին վիճակին վրայ երկինքէն նետուած ռումբերու մասին վկայող վնասուածքներ չկան»:

Նախարարութիւնը հրապարակեց տեսանիւթ մը, որ կը վկայէ կարաւանի անմիջական դրացնութեամբ զինեալներու ներկայութեան մասին: Տեսանիւթին մէջ կ'երեւի, թէ ինչպէ՛ս բեռնատարներուն քովէն կ'անցնի մեքենայ մը, որուն հրասանդ մը կապուած է: Ռուս զինուորականներու տեղեկութիւններուն համաձայն, այդ մեքենան կը պատկանի ծայրայեղական խմբաւորումներուն:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա յայտնեց, որ ամերիկեան կառավարութիւնը իր պնդումները հաստատող «փաստեր չունի»՝ աւելցնելով. «Մենք այս կացութեան հետ որեւէ կայ չունինք»:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով իր կարգին յայտարարեց. «Սուրիական օդուժը կարողութիւնը չունէր Հալէպի մէջ մարդասիրական օժանդակութիւններու կարաւանը ուժակոծելու, որովհետեւ ուժակոծումը տեղի ունեցաւ գիշերով, երբ սուրիական օդանաւերը թռիչքներ չեն կատարեր»:

ՄԱԿ նախապէս յայտնած էր, որ կարելիութիւնը չունի հաստատելու, եթէ տեղի ունեցածը իրապէս օդային յարձակում մըն էր:

Նշենք, որ յարձակումին զոհ գացած էին 20 քաղաքայիներ, իսկ 18 բեռնատարներ՝ քանդուած:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Մենք Հաւատում ենք, Որ Գործ Ունենք Անելու` Անկախ Նրանից Ընդդիմութի՛ւն Ենք, Թե՛ Իշխանութիւն»։ Հրանդ Մարգարեան

Զրուցեց՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆԸ

Ստորեւ կը ներկայացնենք ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանին հետ «Ժողովուրդ» օրաթերթին կատարած հարցազրոյցը, որուն ընթացքին անդրադարձ կատարուած է Հայաստանի մէջ վարչապետի փոփոխութեան, հայաստանեան կեանքին մէջ արձանագրուած վերջին զարգացումներուն:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանը անդրադառնալով Հայաստանի վարչապետի փոփոխութեանը՝ ասաց. «Վերջին շրջանում դրա անհրաժեշտութիւնը շատ կար, եւ կարծում եմ՝ վարչապետի փոփոխութիւնը տեղին էր»:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ».- Մեր երկրում որեւէ անգամ ընդդիմութեանը չի յաջողուել ընտրութիւններում



յաղթել եւ այդպիսով երկրում իշխանափոխութիւն իրականացնել: Եւ հանրութեան կողմից այնքան պահանջուած փոփոխութիւններն ամէն անգամ իշխանութիւնները փորձել են անել՝ վարչապետներին փոխելով: Նախորդ վարչապետը իշխանութեան եկաւ նաեւ «հրաշալի քառեակում» ձեր ղեկավարած ուժի անմիջական ջանքերի արդիւնքում, սակայն ընդամենը երկուսուկէս տարի անց

պարզ դարձաւ, որ նա էլ ի գորտու չեղաւ որեւէ բան շտկելու: Ի՞նչ էր կարծում հնարաւոր է երկրում ընդհանուր փոփոխութիւններ իրականացնել վարչապետների փոփոխութեամբ:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Ընդհանրապէս փոփոխութիւնները լաւ բան են, չեմ էլ կարծում, որ այդքան յաճախ են տեղի ունենում: Բայց հաւատում եմ, որ անհրաժեշտութիւն կար մէկ նոր մօտեցումի, մէկ նոր ղեկավարման մշակոյթի, եւ յուսով եմ, ուզում եմ հաւատալ, որ այս նոր վարչապետի նշանակումով դա կ'ունենանք:

«Ժ».- Ինչո՞ւ հէնց Կարէն Կարապետեանը, այլ թեկնածու չկա՞ր:

Հ. Մ.- Հիմա ցանկացած մարդու պարագայում կարելի է ասել՝ ինչո՞ւ այս մէկը, ոչ այն մէկը: Յամենայն դէպս որոշողը ես չեմ եղել, որոշողը նախագահն է եղել: Կարծում եմ՝ հնարաւոր թեկնածուների մէջ ինքը լաւագոյններից էր:

«Ժ».- Իսկ եթէ նա նորից նեղանայ ու գնայ աւելի բարձր աշխատավարձով աշխատանքի, ինչպէս որ եղաւ, երբ նա Երեւանի քաղաքապետն էր:

Հ. Մ.- Կարծում եմ, որ դա շատ պարզունակ բացատրութիւն է, թէ ինչո՞ւ Կարէն Կարապետեանը քաղաքապետութեան հանգամանքը թողեց: Չեմ կարծում, որ աւելի լաւ աշխատավարձով աշխատանքի համար թողեց: Չեմ հաւատում, աւելի լուրջ պատճառ կար: Մանրամասնութիւններին տեղեակ չեմ, բայց կարող եմ ինչ-որ բաներ ենթադրել:

«Ժ».- Նաեւ որպէս իշխող քաղաքական ուժի ղեկավար՝ ի՞նչ էք կարծում, ի՞նչ քայլեր պետք է անի նոր կառավարութիւնը՝ Կարէն Կարապետեանի գլխավորութեամբ, որպէսզի մեր երկրի՝ 5 միլիառից աւել պետական պարտքը աստիճանաբար ոչ թէ աւելանայ, այլ նուազի, որպէսզի արտագաղթի թափը պակասի, եւ, վերջապէս, աղքատութեան 35 տոկոսանոց ցուցանիշը նուազի:

Հ. Մ.- Գիտե՞ք՝ քայլերը մէկ չեն: Վստահութեան վերականգնում, արդար մրցակցութեան, կայունութեան ապահովում եւ դրսի ներդրումների համար բարենպաստ պայմանների ստեղծում, նաեւ՝ ընկերային արդարութեան ուղղութեամբ քայլեր, սրանք հերթական քայլերն են, որոնք կարծում եմ, ով որ ուզում է՝ երկրի վիճակը դեպի լաւը փոխուի, պարտաւոր է այս ճանապարհներով ընթանալ:

«Ժ».- Երբ մամուլը գրում էր Յովիկ Աբրահամեանի մտայնուտ հրաժարականի մասին, ԱԺ ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեանը յայտարարեց, որ ՀՅԴ-ն տեղեակ չէ կառավարութեան փոփոխութեան մասին: Հետաքրքիր է՝ քաղաքացիները ձեռք տեղեակ չէի՞ն պահել կառավարութեան փոփոխութեան մասին:

Հ. Մ.- Ո՛չ, երկար ժամանակ էր, որ փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը քննութեան նիւթ էր: Դեռ նախքան մեր քաղաքացիներին համաձայնագրի ստորագրումը, դեռ նախքան այդ էլ մենք քննել ենք այդ հարցերը նախագահի հետ, եւ նախագահն ունեցել է տրամադրութիւն փոփոխութիւնների: Այլ հարց է, թէ այդ փոփոխութիւնները որոշակիօրէն ինչպէ՞ս պետք էր լինէին: Թէ դա որոշակիօրէն ինչպէ՞ս պետք էր լինէր, բնականաբար դրանք ամէն մէկ հանգրուանում են պարզում, յստականում, յղկում, բայց այս փոփոխութիւնների ծրագիրը դեռ նախքան մեր՝ Հանրապետականի հետ համաձայնագրի ստորագրումը քննութեան նիւթ է եղել, իսկ համաձայնագիրն արդէն փաստն է, որ անհրաժեշտ է փոփոխութիւն, քանի որ այն, ինչ-որ մենք համաձայնում էինք անել, դա արդէն փոփոխութիւն է:

«Ժ».- Իսկ որոշակիօրէն վարչապետ Յովիկ Աբրահամեանի հրաժարականի մասին դուք ե՞րբ էք իմացել:

Հ. Մ.- Դէ, հիմա ի՞նչ կարելուր է... բայց այնպէս չի, որ չենք իմացել, կարծում եմ, որ առաջիններից ենք եղել, որ իմացել ենք:

«Ժ».- Տեղեկութիւններ կան, որ Կարէն Կարապետեանը դաշնակցական նախարարներից միայն Լեւոն Մկրտչեանի հետ է ցանկանում աշխատել: Խօսե՞լ էք նոր վարչապետի հետ այս թեմայով:

Հ. Մ.- Միայն չէ: Այդ արտայայտութիւնը աղաւաղուած էք ներկայացնում, լսել եմ, որ բոլոր նախարարներից աւելի շատ կ'ուզէր Լեւոն Մկրտչեանի հետ աշխատել, ոչ թէ դաշնակցական նախարարներից: Կարծում եմ, որ ինքը նախարարների հետ խնդիր չունի, ուղղակի այս 20 օրուայ աշխատանքային ժամանակաշրջանում ինքը պետք է եզրակացութիւնների յանգի, ինչպէ՞ս է տեսնում կառավարութեան կառուցուածքն ու ձեւաւորումը, տնտեսական ի՞նչ քաղաքականութիւն է ուզում կիրառի երկրում, եւ բնական է, որ այստեղ կարող են հարցեր ստեղծուել: Բայց այս պահին առարկութիւն կամ վերապահութիւն չունի մեր նախարարների նկատմամբ:

«Ժ».- Դուք այդ թեմայով խօսե՞լ էք իր հետ:

Հ. Մ.- Բնականաբար:

«Ժ.»- Հիմա բոլոր նախարարները ժամանակաւոր պաշտօնակատարներ են, ե՞րբ են դաշնակցական նախարարները վերանշանակուելու եւ արդե՞ք վերանշանակուելու են:

Հ. Մ.- Սկզբունքային համաձայնութիւն կայ, որ մեր նախարարները մնալու են, այսքանը, բայց սա՛ ընդհանուր ձեւով: Ինչպէս ասում են՝ ինքը 20 օր դեռ ժամանակ ունի:

«Ժ.»- Տեղեկութիւններ կան, որ 2017թ. ԱԺ ընտրութիւններում Դաշնակցութիւնը Հանրապետական կուսակցութեան հետ դաշինքով է մասնակցելու: Կա՞յ նման ծրագիր, քննարկում եղե՞լ է, թե՞ ոչ:

Հ. Մ.- Չգիտեմ, յանկարծ մամուլը երբեմն բաներ է մոզոնում, որ մարդու երեւակայութիւնից դուրս է: Այդպիսի բան չկայ, մենք գնալու ենք մեր ծրագրով եւ անհրաժեշտութիւն չկայ ոեւէ մէկի հետ դաշինք կազմելու: Ես նման բան առաջին անգամ եմ լսում:

«Ժ.»- Իսկ քաղաքական ո՞ր ուժի հետ էք տեսնում ձեր հետագայ համագործակցութիւնը:

Հ. Մ.- Ճիշդն ասած՝ բոլորի հետ էլ տեսնում եմ, եթէ կայ նպատակների մէջ ընդհանրութիւն: Իսկ եթէ մօտեցումները համընկնում են, ես չեմ տեսնում պատճառ չհամագործակցելու: Կարծում եմ, որ մենք արդէն համագործակցութեան մէջ ենք Հանրապետական կուսակցութեան հետ, եւ դա ամէն ինչ ասում է, բայց դա չի նշանակում, որ մեզ համար բացառուած է միւսների հետ համագործակցելը:

«Ժ.»- Դաշնակցութիւնը, լինելով իշխանութեան ներսում, մշտապէս հռչակել է իրեն իշխանութեան ներսի ընդդիմութիւն եւ բարձրաձայնել է իշխանութեան թերութիւնների մասին, սակայն տարիների ընթացքում այդ թերութիւնները ոչ թէ նուազել են, այլ աւելի են խորացել:

Հ. Մ.- Նախ ես համոզուած չեմ, որ աւելի խորանում են, մեր երկիրը այն չի այսօր, ինչ որ 20 տարի առաջ էր:

«Ժ.»- Այո՛, այսօր աւելի մեծ է անվստահութիւնը, մարդկանց յուսահատութիւնը, ինչի դրսեւորումները մենք տեսանք յուլիսեան դէպքերի ժամանակ:

Հ. Մ.- Այո՛, այսօր դա կայ, բայց ամէն մի երեւոյթ, որ դու գնահատում ես, համեմատական հասկացողութիւն է: Մէկ կողմից դու քեզ պետք է գնահատես քո նման ուժերի հետ, բայց որպէսզի ինքնասիրահարուածութեամբ չտարուես, ինքնագոհութիւն չապրես, քեզ պետք է համեմատես զարգացած երկրների հետ, որին ձգտում ես հասնել: Այս առումով մենք զգացել ենք, որ միշտ էլ առաջ ենք գնում, բայց միշտ էլ զոհ չենք եղել: Ես Հայաստանում եմ 1990 թուականից, եւ բոլոր օրերը ժապաւենի նման իմ աչքի առաջով անցնում են: Այսինքն Հայաստանը ամենավատ երկիրը չէ, սա մեր մտքից պետք է հանենք: Ժողովրդավարութեան առումով մենք շա՛տ շա՛տ բարձր ենք բոլորից: Թերութիւններ ունենք անշուշտ, դուք ասում էք՝ մենք կառավարութեան մէջ ինչ-որ իմաստով բացասական երեւոյթները փորձել ենք մատնանշել, չեմ կարծում, որ Դաշնակցութեան կեցուածքի մէջ բան է փոխուել այն առումով, որ մի ժամանակ ընդդիմութիւն էինք կամ իշխանութիւն, քանի որ մեր մօտեցումները կուսակցական շահից ելնելով մօտեցումներ չեն: Մեր դիրքորոշումները մեր երկրի համար են, մենք չենք կարող ասել, որ երբ ընդդիմութիւն էինք, երկրում փտածութիւն կար, իսկ երբ իշխանութիւն ենք, փտածութիւն չկայ, այդպիսի բան չենք կարող ասել: Իբրեւ ընդդիմութիւն՝

այլ բան ունեինք եւ անում էինք, իբրեւ իշխանութիւն՝ մենք հաւատում ենք, որ գործ ունենք անելու եւ անում ենք:

Տղերքը խաբուեցին

«Սասնայ ծոեր»-ի համար գրել էին այդ թեքսթը ու թաքնուել

Հրանդ Մարգարեանը, անդրադառնալով յուլիսի 17-ին «Սասնայ ծոեր» խմբի անդամների կողմից ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրամանը, ասաց. «Տղերքը գնացին, քանի որ ես կարծում եմ, որ նրանք մաքուր էին, բայց նաեւ իրենք պէտք է ներեն ինձ, իմ երեկուայ ընկերները, իրենք խաբուեցին, իրենք խաբուեցին»:

«Ժ».- Յատկապէս այս ամառ առաւել ակնառու դարձաւ, թէ ինչքան խորն է հանրութեան մի զգալի մասի յուսահատութիւնը: «Սասնայ ծոեր»-ի կողմից ոստիկանութեան ՊՊԾ գնդի գրամանը յաջորդած իրադարձութիւնները ցոյց տուեցին, որ մարդկանց դժգոհութիւնն այնքան է մեծացել, որ պատրաստ են անգամ զէնքի ուժով հարց լուծելու տարրերակը ողջունել: Ինչպէս յայտնի է «Սասնայ ծոեր» խմբի անդամների մէջ կային Դաշնակցութեան նախկին անդամներ: Ըստ ձեզ, ինչն է նրանք դիմեցին այս ծայրայեղ քայլին եւ ինչի՞ հասան ի վերջոյ:

Հ. Մ.- Ես այս հարցով առաջին անգամ եմ խօսում: Պատճառները շատ են: Հայաստանի այդ օրերի չէի համակրում, քանի որ ինձ նեղացրել է, տագնապեցրել է, որովհետեւ ես այն անձերից եմ, եթէ մի բան ասում եմ, ճիշդ է, պրաւօ, գնում եմ, մասնակցում եմ ու փորձում եմ այդ հարցի մէջ լինել առաջին գծում: Ես չէի կարող պատկերացնել, որ մարդիկ կարող են պրաւօ, ապրէք ասել, բայց իրենց գործը շարունակեն, իրենց կողքը չկանգնեն, իրենց դիրքորոշումների մէջ հետեւողական չլինեն: Ի՞նչ ստացուեց արդիւնքում: Արդիւնքում ստացուեց, որ ճիշդ է՝ նրանք նախկին դաշնակցականներ են, բայց ինչ-որտեղ մենք միասին կեանք ենք ունեցել, ես իրենց որպէս մարդ յարգում եմ եւ շատ մեծ ափսոսանք կայ մէջս, որ արդեօ՞ք իրենք գոհ չգնացին քաղաքական ինչ-որ վախկոտ մարդկանց հաշիւների, որ չփորձեցին իրենց կողքին կանգնել: Իրենց հետ ես տեսնում էի հեռուստատեսութեամբ, կար 70 տարեկան մարդ, գուցէ դեռ աւելին: Այն քաղաքական գործիչները, որոնք հրապարակում գոռում էին՝ ապրեն իրենք, ապրեն իրենք, իրենք նրանցից աւելի փոքր էին, թող մի շէնք էլ իրենք գրաւէին, եթէ դա ճիշդ ճանապարհն էր: Եթէ դա ճիշդ ուղին էր, թող մի շէնք էլ իրենք գրաւէին, երկրորդը գրաւէին, 4-րդը գրաւէին, իսկ եթէ դա ճիշդ չէր, ինչպէս ասեցին՝ պրաւօ: Ախր դրա գինը վճարեցին այդ տղերքը եւ դեռ հաւանաբար վճարելու են: Ես իսկապէս դրա համար ափսոսանքի զգացում ունեմ: Նոյնիսկ բարկութեան տրամադրութիւններ են ստեղծում, երբ ամէն անգամ մտածում եմ:

«Ժ».- Ամէն դէպքում ինչի՞ հասան «Սասնայ ծոեր»-ը:

Հ. Մ.- Չի կարելի որեւէ բան ղեկավարել՝ առանց առաջին գծում լինելու, դա մի քիչ անպարկեշտութիւն է, մարդկանց հայրենասիրութիւնը մարդկանց զգացական ապրումները օգտագործես, կրակի մէջ զցես եւ դու մի կողմ կանգնես, դա մարդկային չէ: Դա գաղափարական մարդու պահուածք ու կեցուածք չէ: Ես իսկապէս վատ եմ զգում այն քաղաքական գործիչների

համար, այսպես կոչուած, քաղաքական գործիչների համար, որոնք ասեցին պրաւօ, բայց նոյնը չարեցին: Եթէ ճիշդ էր, թող անէին, եթէ ճիշդ չէր, ինչո՞ւ այդ մթնոլորտը ստեղծեցին:

«Ժ».- Իսկ ո՞րն է ձեր գնահատականը «Սասնայ ծռեր»-ի այդ քայլին:

Հ. Մ.- Տղերքը գնացին, քանի որ ես կարծում եմ, որ նրանք մաքուր էին, բայց նաեւ իրենք պէտք է ներեն ինձ, իմ երէկուայ ընկերները, իրենք խաբուեցին, իրենք խաբուեցին: Իրենք կարծեցին, որ հարիւր հազարաւոր ժողովուրդ դուրս կը գայ եւ իրենց կը պաշտպանի: Իրենք խաբուեցին, քանի որ կարծեցին, թէ դրանով ինչ-որ բան կարող էին փոխել, բայց Հոկտեմբերի 27-ն էլ ապացուցեց, որ այդ ճանապարհով հնարաւոր չի բան փոխել, ոչ թէ հնարաւոր չի փոխել, դրանից մենք չենք շահում, աւելի վնասում ենք: Վերջիվերջոյ, եթէ կայ պայքարելու օրինական ձեւ, առնուազն այդ օրինական ձեւը դու պիտի սպառես:



«Ժ».- Բայց տղաներն ասում էին, որ օրինական բոլոր ճանապարհները սպառուած են: Ըստ ձեզ, ո՞րն էր օրինական ճանապարհը, որով նրանք կարող էին պայքարել, բայց չարեցին:

Հ. Մ.- Ընտրութիւններ, ժողովրդին կազմակերպել: Նայէք՝ ո՞ր կուսակցութիւնը Հայաստանում ունի կազմակերպուած շարքեր: Ինչո՞ւ չունեն, որովհետեւ չեն աշխատել, չէ՞: Այնտեղ ոչ ոքի ձեռքը չեն բռնում, կոկորդը չեն սեղմում, բայց տքնաջան աշխատանք է պէտք ժողովրդին քաղաքականօրէն կազմակերպելու համար, դա է միջոցը փոփոխութիւնների: Ես կարող եմ կռուել, պոռթկալ, երբ երկրում անարդարութիւն կայ, ընկերային ծանր վիճակ կայ, բայց եթէ ես կռում եմ, պոռթկում եմ, ասում եմ, որ ռուսական խարխիւները Հայաստանից պէտք է դուրս գան, որովհետեւ դա ինչ-որ այլ պետութիւնների պահանջն է, դա այս ժողովրդի դարդ ու ցաւի հետ ի՞նչ կապ ունի, դա արդէն լրիւ ուրիշ բան է: Ժողովրդի բողոքի, անարդարութեան ընկերային վատ վիճակի հետ ի՞նչ առնչութիւն ունի, թէ հայ -թուրքական սահմանը ռուսական ուժե՞րն են պահում, թէ՞ հայկական: Ոչ էլ այդ տղաներն են դրանում համոզուած: Ես վստահ եմ, որ իրենք էլ այդ համոզումները չունեն, ես վստահ եմ, որ մէկ ուրիշը իրենց համար գրել է այդ թեքսթը եւ յետոյ թաքնուել:

«Ժ».- Այսինքն ինչ-որ ուժեր տղաներին ուղղորդել էին:

Հ. Մ.- Դէ, վերջիվերջոյ ես այդ տղաներին շատ լաւ գիտեմ, ես այդ տղաների մի մասին առնուազն շա՛տ շա՛տ լաւ գիտեմ, վատ իմաստով չեմ ասում, բայց նրանք ղեկավարուող անձինք են: Իրենց համոզումներն էլ, նրանց ներաշխարհն էլ գիտեմ: Այն պահանջները, որոնք ներկայացուեցին, առնուազն այս մասով, իրենց հետ առնչութիւն չունէին:

www.aztagdaily.com

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Կարո Փայլանի Ելոյթները

24-26 Սեպտեմբերին Թուրքիոյ Ժողովուրդներու ժողովրդավարութիւն կուսակցութեան հիմնադիր անդամներէն, մարդկային եւ յատկապէս փոքրամասնութիւններու իրաւանց պաշտպան գործիչ, երկար տարիներու ջատագով՝ Թուրքիոյ մէջ երկլեզու դասաւանդութեանց,



Թուրքիոյ խորհրդարանի հայ անդամ Կարո Փայլան պիտի այցելէ Հարաւային Քալիֆորնիա մասնակցելու շարք մը ձեռնարկներու:

24 Սեպտեմբերին Փայլան գլխաւոր բանախօսը պիտի ըլլայ մտաւորական այն համագումարին, որ կազմակերպուած է «Հայեր եւ յառաջդիմական քաղաքականութիւն» կազմակերպութեան

եւ Համալսարանական ուսանողներու համահայկական միութեան կողմէ, համագործակցութեամբ՝ «Ուուտպըրի» համալսարանին: «Աշխարհաքաղաքականութիւնն ու փոքրամասնութիւնները. Թուրքիոյ պարագան» խորագրուած սոյն գիտաժողովը տեղի պիտի ունենայ «Ուուտպըրի» համալսարանի «Ֆլէշըր Ճոնզ» սրահին մէջ: Գիտաժողովին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն նաեւ դոկտ. Խաչիկ Մուրատեան, դոկտ. Ասլի Պալի եւ իրաւաբան Էտվին Մինասեան: Նոյն օրը երեկոյեան Լոս Անճելըսի Հայկական միացեալ խորհուրդին կազմակերպութեամբ Ազգ. Ֆերահեան վարժարանին մէջ տեղի պիտի ունենայ համայնքային ընթրիք մը՝ ի պատիւ երեսփոխանին:

25 Սեպտեմբերին Կարո Փայլան ներկայ պիտի ըլլայ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցոյ, ապա՝ Ս. Խաչ եկեղեցոյ պատարագին: Ան պիտի այցելէ նաեւ Հայոց ցեղասպանութեան զոհերու յուշարձանը Մոնթեպելլոյի մէջ, իսկ երեկոյեան Կլենտլի «Գրիգոր եւ Մարիամ Գարամանուկեան» երիտասարդական կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ համայնքային հաւաք մը՝ «Ասպարէզ»-ի հիւրընկալութեամբ:

27 Սեպտեմբերին Քալիֆորնիոյ նահանգային համալսարանի Ֆրեզնոյի մասնաճիւղի «ՄըքԼէյն» սրահին մէջ Փայլան պիտի մասնակցի քննարկումի մը՝ Թուրքիոյ հայութեան ներկայ իրավիճակին, ինչպէս նաեւ երկրի ընդհանուր կացութեան ու քրտական հարցին վերաբերող: Ներկայացումը մաս կը կազմէ համալսարանին մէջ գործող Հայագիտական ուսմանց ծրագրի աշնանային դասախօսութեանց շարքին, որ կ'իրականացուի «Լիան Ս. Փիթըրզ» հիմնարկին աջակցութեամբ:

WWW.AZTARAR.COM

«Վարդավառ» Երգչախումբի Անդրանիկ Ելոյթը Նուիրուած Կոմիտասի Յիշատակին



Հովանաւորութեամբ Հաշիմական ընտանիքի իշխանուհի Ռիմ Ալիի եւ նախագահութեամբ Ամմանի քաղաքապետ Աքըլ Պըլթաճիի, 29 օգոստոսին Ամմանի «Հուսէյն» մշակութային կեդրոնի թատերասրահին մէջ տեղի ունեցաւ յորդանանահայ «Վարդավառ» երգչախումբին անդրանիկ ելոյթը՝ խմբավարութեամբ հայ արուեստի կատարող, երաժիշտ, երգահան, խմբավար Վարդուհի Թորոյեան-Ներսէսեանի:

30 անդամներէ բաղկացած երգչախումբը կեանքի կոչուեցաւ 2016-ի սեմին: Համերգին ընթացքին իր մասնակցութիւնը բերաւ Յորդանանի Ազգային երաժշտանոցի սենեկային նուագախումբը, գլխաւորութեամբ երաժշտանոցի տնօրէն, Յորդանանի Ազգային նուագախմբի ղեկավար Մոհամետ Օթման Ստիքի:

Ձեռնարկը արժանացաւ բոլորին գնահատանքին եւ ծառայեց ազգային գիտակցութիւնը ամրապնդելու սրբազան նպատակին:

Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան 60-Ամեակը



27 օգոստոսին նշուեցաւ Լոս Անճելըսի Իրանահայ միութեան 60-ամեակը: Այս առիթով կեդրոնը անուանակոչուեցաւ «Լուդովիքա եւ Յակոբ Սյնթապլեան» կեդրոն, ամուլին կատարած 4 միլիոն ամերիկեան տոլար նուիրատուութեան համար:

Առաջին յարկի ընդունարանը անուանակոչուեցաւ «Մինան եւ Անժելա Մինանեան», իսկ 10 հազար գիրքերով օժտուած գրադարանը կոչուեցաւ «Օտրի եւ Վահան Գրեգորի» անունով:

Յայտարարուեցաւ նաեւ, թէ արուեստի, պարի սենեակը պիտի կոչուի Թումիկ Ալեքսանեանի անունով՝ առ ի գնահատանք անոր արդիւնաւէտ գործունէութեան:

Ձեռնարկին բարի գալուստի խօսքը արտասանեց Յովիկ Կապիկեան, որ ներկայացուց օրուան խորհուրդը: Օրհնութեան աղօթքով եւ գնահատական խօսքերով ելոյթ ունեցաւ Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեան: Հայաստանի հիւպատոսարանի անունով գնահատական խօսք ուղղեց Արմելա Սահակեան: Ելոյթ ունեցան նաեւ բարձրաստիճան քաղաքական, միութենական ղեմքեր:

Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Երիտասարդ Առաջնորդներու Եռօրեայ Հաւաք

7-9 Սեպտեմբերին կաթողիկէ եկեղեցոյ Ծերովանի քաղաքամերձ ասանի համալիրին մէջ տեղի ունեցաւ Վրաստանի հայ համայնքի երիտասարդ առաջնորդներու եռօրեայ հաւաք:

Դասընթացքը մեկնարկեց Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական Խորէն վրդ. Յովհաննէսեանի ողջոյնի խօսքով:

Եռօրեայ ծրագիրի ընթացքին մասնակիցները ունկնդրեցին Խորէն վրդ. Յովհաննէսեանի դասախօսութիւնները Սուրբ հաղորդութեան խորհուրդին եւ աղօթքի կարեւորութեան մասին: Յուսիկ քինյ. Յարութիւնեան խօսեցաւ հայ երիտասարդի կեանքին մէջ եկեղեցոյ դերակատարութեան մասին: Վիրահայոց թեմի մշակոյթի բաժնի տնօրէն Լեւոն Չիթիլեան ներկայացուց Թիֆլիսի հայկական պատմամշակութային ժառանգութիւնը: Վիրահայոց թեմի իրաւական հարցերու բաժնի տնօրէն Միքայէլ Աւագեան անդրադարձաւ քաղաքացիական հասարակութեան զարգացման եւ ոչ կառավարական կազմակերպութիւններու թեմային, իսկ Խաղաղութեան հիմնադրամի նախագահ Կիրակի Թումասեան խօսեցաւ «Վրաստանի Եւրատլանտեան համարկում» նիւթին մասին:

Ծրագիրի արարտին առաջնորդ սրբազանը բարձր գնահատեց սոյն ծրագիրի կազմակերպիչները եւ դասընթացի մասնակիցներուն յանձնեց մասնակցութեան վկայականներ եւ խաչեր:

Հաւաքի արարտին մասնակիցները այցելեցին Թիֆլիսի Ս. Գեորգ առաջնորդանիստ եկեղեցի եւ հայ գրողներու ու հասարակական գործիչներու Խոջիվանքի պանթէոն:

Սուրբ Խաչի Տօնին Առթիւ Դաշտահանդէս

Կազմակերպութեամբ Ֆրանսայի հայ կաթողիկէ Սուրբ Խաչ ընկերակցութեան, 11 Սեպտեմբերին Սերի Մխիթարեան վարժարանի պարտէզներուն մէջ Սուրբ Խաչի տօնին առիթով, տեղի ունեցաւ տարեկան դաշտահանդէսը:

Առաւօտուն վարժարանի սրահին մէջ Յովհաննէս եպս. Թէրթուզեան մատուցեց Ս. պատարագ, որմէ ետք իր քարոզին մէջ ան բացատրեց օրուան խորհուրդը՝ շեշտելով, որ մեզմէ իւրաքանչիւրը կը կրէ փորձութեան, փառքի, տառապանքի, երջանկութեան իր խաչը եւ, մեր արարքներուն համաձայն, պիտի վճռուի, թէ՛ արժանի՞ ենք կամ ոչ՝ վերակենդանացման, յաւիտենականութեան եւ դրախտին:

Այնուհետեւ բակին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ հայկական ներշնչումով պատրաստուած ձեռարուեստի գործերու վաճառք:



www.tert.am

ԱՅԼԱԶԱՆ

Ամիսը Անգամ Մը Մարմինը Մաքրենք Թոյներէն

Իրաքանչիւր մարդ, առողջ, թէ հիւանդ, պէտք է առնուազն ամիսը անգամ մը մարմինը մաքրէ թոյներէն: Մարմինը մաքրելու բազմաթիւ ձեւեր կան. կը ներկայացնենք այն մէկը, որ հիմնուած է խնձորի վրայ:

Շատ կարեւոր է մարմինը ներսէն մաքրելը, քանի որ անընդհատ անորակ սնունդ ստանալով՝ մենք վնասակար մնացորդներ կը հաւաքենք մարսողական անցքերուն մէջ, ուրկէ անոնք կը տարածուին եւ կը վնասեն մարմնին:

Խնձորին մէջ առկայ փեքթինը դրական ազդեցութիւն կը գործէ մարսողական համակարգին վրայ եւ կը մաքրէ վնասակար մասնիկներէն:

Ահա թէ ինչպէ՛ս կարելի է ամիսը անգամ մը մարմինը մաքրել թունաւոր նիւթերէն:

Նախաճաշ

Առաւօտեան մէկ բաժակ խնձորի թարմ հիւթին աւելցնել կէս կիտրոնի հիւթ եւ ումպ-ումպ խմել: Երկու-երեք ժամ ետք երկու խնձոր ուտել՝ կեղեւով:

Ճաշ

Ճաշի ժամուն խնձորի կեղեւով պատրաստուած թէյ խմել՝ 2 ճաշի դգալ մեղրով: Մէկ-երկու ժամ ետք 2-4 խնձոր ուտել եւ բաժակ մը հիւթ խմել:



Ընթրիք



Ընթրիքին տաք խիւսին աւելցնել երկու թէյի դգալ մեղր եւ ուտել:

Մարմինը ներսէն մաքրելու օրը պէտք չէ օգտագործել որեւէ այլ տեսակի ուտելիք կամ ըմպելիք՝ բացի նշուածներէն:

Խնձորը դիւրին մարսուող ուտելիքներէն մէկն է: Եթէ կանոնաւոր կերպով մաքրենք մեր մարմինը այս միջոցով, կը լաւացնենք մեր մարսողական

համակարգը: Այս միջոցը թելադրելի է բոլորին, կապ չունի առողջ թէ հիւանդ ըլլալու հետ: Անիկա կը մաքրէ եւ կը կարգաւորէ մարսողութիւնը, արիւնը եւ ներքին գործարանները: Նաեւ օգտակար է յօդացաւէ, արթորիտէ, լեարդի եւ երիկամի հարցերէ տառապողներուն:

Վերջապէս, խնձորի այս մեթոտը դրական ազդեցութիւն կ'ունենայ ջղային համակարգին վրայ, կը բարելաւէ նիւթափոխականութիւնը եւ կ'օգնէ ձերբազատուելու աւելորդ քիլոներէն: